## *1.3. Գներ և սակագներ*

### Գների փոփոխություններն ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների 2005թ. հունվար-հոկտեմբերին

*(նախորդ ամսվա նկատմամբ, %)*

| | Սպառողական գների ինդեքս[1] | Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս[2] | Գների ինդեքսը շինարարությունում [3] | Բեռնափոխադրումների սակագների ինդեքս [4] | Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքս [5] | Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս [6] |
|---|---|---|---|---|---|---|
| Հունվար | 105.4 | 100.5 | 100.7 | 97.3 | 98.2 | 100.3 |
| Փետրվար | 99.3 | 94.8 | 99.9 | 98.9 | 98.4 | 100.6 |
| Մարտ | 99.1 | 101.2 | 122.9 | 98.7 | 99.6 | 98.3 |
| Ապրիլ | 99.1 | 97.4 | 99.9 | 98.5 | 97.3 | 103.4 |
| Մայիս | 100.1 | 99.9 | 100.0 | 97.4 | 97.6 | 100.6 |
| Հունիս | 98.6 | 101.8 | 100.1 | 100.7 | 79.3 | 100.9 |
| Հուլիս | 95.5 | 96.3 | 100.1 | 99.5 | 81.8 | 101.1 |
| Օգոստոս | 98.6 | 102.4 | 101.0 | 106.0 | 88.0 | 103.0 |
| Սեպտեմբեր | 100.9 | 101.1 | 99.9 | 97.7 | 98.1 | 103.0 |
| Հոկտեմբեր | 100.1 | 98.2 | 100.9 | 99.4 | 102.4 | 97.8 |
| 2005թ. հոկտեմբերը 2004թ. դեկտեմբերի նկատմամբ | 96.5 | 93.5 | 126.2 | 93.8 | 88.4*) | 104.8*) |
| 2005թ. հունվար-հոկտեմբերը 2004թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ | 100.8 | 109.9 | 119.2 | 88.7 | 88.1 | 106.5 |

*) 2005թ. հոկտեմբերի և 2004թ. դեկտեմբերի ընթացիկ գներով հաշված:

[1] Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում գների դիտարկումը կատարվում է նախորդ ամսվա 21-ից հաշվետու ամսվա 20-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում և հանրապետության մարզերում 400 անվանում ապրանք (ծառայություն) - ներկայացուցիչների գծով:

[2] Գների դիտարկումը ՀՀ-ում կատարվում է արդյունաբերական ոլորտի 254 բազային կազմակերպություններում՝ 888 անվանում արտադրանք - ներկայացուցիչների գծով: Գների ինդեքսի հաշվարկը կատարվում է ժողտնտեսության ճյուղերի համամիութենական դասակարգչի (ԺՏՃՀԴ) համաձայն: Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչին (ՏԳՏԴ) համապատասխան գների ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունը մշակման փուլում է:

[3] Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության տվյալների:

[4] Հաշվարկվում է տրանսպորտի 4 տեսակներով (երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային)՝ բեռնառաքումների դիտարկված սակագների հիման վրա:

[5] Ըստ 7600 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից իրացված 61 անվանում գյուղմթերքի իրացման գների և ծավալների հետազոտման տվյալների:

[6] Ըստ 7600 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից 92 անվանում արտադրության միջոցների գնման գների և ծավալների հետազոտման տվյալների:

### Գների, սակագների աճի տեմպերը 2004-2005թթ. հունվար-հոկտեմբերին

*(նախորդ տարվա հունվար-հոկտեմբերի նկատմամբ,%)*



*Արտարժութային շուկա:* 2005թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ հանրապետության սպառողական շուկայում արձանագրված 0.1% գնաճն ուղեկցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 1.1% նվազումով: Հոկտեմբերին 2004թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գները և հաշարկային փոխարժեքը նվազել են համապատասխանաբար՝ 3.5% և 7.6%: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել է նմանատիպ միտում. սպառողական գների և հաշվարկային փոխարժեքի նվազումը կազմել է համապատասխանաբար 1.1% և 10.4%: 2005թ. հոկտեմբերին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային միջին փոխարժեքը կազմել է 449.41 դրամ, ինչը 11.3% ցածր է նախորդ տարվա հոկտեմբերի համապատասխան ցուցանիշից (506.49 դրամ):

**ՀՀ սպառողական գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի փոփոխությունները 2004-2005թթ. հունվար-հոկտեմբերին**

*(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ,% )*




*Սպառողական գներ*: 2005թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ ՀՀ սպառողական շուկայում գրանցվել է 0.1% գնաճ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշի կրկնությունն է (0.1%):

**Սպառողական գների հավելաճը 1996-2005թթ. հոկտեմբերին**

*(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ,%)*



### Սպառողական գների փոփոխությունները 2005թ. հոկտեմբերին

(%)

| | *2005թ.* | | | | |
|---|---|---|---|---|---|
| | *հոկտեմբերը* | | | | հունվար-հոկտեմբերը 2004թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ |
| | 2005թ. սեպտեմբերի նկատմամբ | 2004թ. դեկտեմբերի նկատմամբ | 2004թ. հոկտեմբերի նկատմամբ | 2002թ. նկատ-մամբ | |
| Սպառողական գների ինդեքս | 100.1 | 96.5 | 99.6 | 108.0 | 100.8 |
| *այդ թվում`* | | | | | |
| պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) | 100.0 | 94.1 | 98.5 | 109.6 | 101.1 |
| ոչ պարենային ապրանքների | 100.6 | 101.8 | 102.1 | 104.6 | 100.2 |
| ծառայությունների | 100.1 | 101.8 | 101.8 | 105.0 | 100.3 |

2005թ. հունվար-հոկտեմբերին սպառողական գների միջին ամսական նվազումը կազմել է 0.35%, ինչը 0.25 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը ( 0.1%):

### ՀՀ սպառողական շուկայում պարենային, ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2005թ. հունվար-հոկտեմբերին

*(նախորդ ամսվա համեմատ, %)*




*Պարենային ապրանքների գներ:* Պարենային ապրանքների շուկայում 2005թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ արձանագրված ընդհանուր գների հարաբերականորեն կայուն մակարդակի պայմաններում դիտարկվող 13 ապրանքախմբերից 5-ում արձանագրվել է 0.3-11.3% գնաճ, 6-ում` 4.8-0.1% գնանկում, իսկ 2-ում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

### Գների փոփոխություններն ըստ պարենային առանձին ապրանքախմբերի

(%)

| | *2005թ.* | | | | |
|---|---|---|---|---|---|
| | *հոկտեմբերը* | | | | հունվար-հոկտեմբերը 2004թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ |
| | 2005թ. սեպտեմբերի նկատմամբ | 2004թ. դեկտեմբերի նկատմամբ | 2004թ. հոկտեմբերի նկատմամբ | 2002թ. նկատմամբ | |
| *Պարենային ապրանքներ* (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) | *100.0* | *94.1* | *98.5* | *109.6* | *101.1* |
| *Պարենային ապրանքներ* | *100.0* | *93.5* | *98.3* | *110.6* | *101.2* |
| հացամթերք | 99.9 | 95.9 | 94.8 | 120.6 | 93.5 |
| մսամթերք | 99.9 | 102.8 | 103.0 | 125.2 | 104.1 |
| ձկնամթերք | 111.3 | 63.5 | 109.8 | 142.3 | 172.9 |
| կաթնամթերք | 100.9 | 99.5 | 103.8 | 106.4 | 103.6 |

| | *2005թ.* | | | | |
|---|---|---|---|---|---|
| | *հոկտեմբերը* | | | | հունվար-հոկտեմբերը 2004թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ |
| | 2005թ. սեպտեմբերի նկատմամբ | 2004թ. դեկտեմբերի նկատմամբ | 2004թ. հոկտեմբերի նկատմամբ | 2002թ. նկատմամբ | |
| ձու | 103.8 | 84.1 | 95.7 | 113.6 | 105.7 |
| կենդանական և բուսական յուղ | 100.3 | 99.4 | 100.4 | 109.2 | 99.3 |
| միրգ | 99.6 | 68.3 | 82.8 | 91.0 | 105.1 |
| բանջարեղեն և կարտոֆիլ | 95.2 | 82.0 | 100.6 | 76.5 | 105.2 |
| շաքարավազ | 99.8 | 98.1 | 97.9 | 97.1 | 98.2 |
| սուրճ, թեյ, կակաո | 100.4 | 103.0 | 104.2 | 105.2 | 101.2 |
| հրուշակեղեն | 100.0 | 100.2 | 100.6 | 107.4 | 103.2 |
| այլ մթերքներ | 99.9 | 101.1 | 101.4 | 102.8 | 102.4 |
| ոչ ոգելից խմիչք | 100.0 | 105.5 | 106.1 | 116.0 | 106.9 |
| *Ոգելից խմիչք և ծխախոտ* | 100.0 | 100.4 | 100.4 | 101.1 | 99.6 |

**Հացամթերքի, այդ թվում հացի և ալյուրի գների փոփոխությունները 2003-2005թթ.**

*(2002թ. նկատմամբ,%)*




Ձկնամթերքի ապրանքախմբում 2005թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ գրանցվել է 11.3% գնաճ, ինչը թարմ «սիգ» տեսակի ձկան 12.7% գնաճի արդյունք է: Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում ձկնամթերքի գներն աճել են 0.4-40.3% (գնաճի համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է ք. Հրազդանում, Չարենցավանում): Մայրաքաղաքում ձկնամթերքի գնաճը կազմել է 5.0%:

2005թ. սեպտեմբեր-հոկտեմբերին հանրապետությունում գրանցվել է ձվի 10.3% ընդհանուր գնաճ, այդ թվում, հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ ձվի գնաճը կազմել է 3.8%: Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում գրանցվել է ձվի 0.7-15.4% գնաճ (համեմատաբար բարձր գնաճ արձանագրվել է ք. Թալինում): Մայրաքաղաքում ձվի գնաճը կազմել է 3.7%:

Կենդանական և բուսական յուղի, սուրճի, թեյի, կակաոյի, կաթնամթերքի ապրանքախմբերում 2005թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ գրանցվել է 0.3-0.9% գնաճ, իսկ հրուշակեղենի, ոչ ոգելից խմիչքի, ոգելից խմիչքի և ծխախոտի ապրանքախմբերում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

2005թ. հոկտեմբերին մրգի ապրանքախմբում շարունակվել է հունիս-սեպտեմբեր ամիսներին արձանագրված գնանկման միտումը և 5 ամիսների ընդհանուր գնանկումը կազմել է 48.4%:

Մրգի գների փոփոխությունները 2003-2005թթ. հունվար-հոկտեմբերին

*(նախորդ ամսվա նկատմամբ,%)*




2005թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ գրանցվել է մրգի 0.4% գնանկում, ինչը դեղձի 10.8%, խաղողի 10.0%, խնձորի 8.0%, տանձի 7.1%, ադամաթզի 5.1% գնանկման արդյունք է: Դրան զուգընթաց, բոստանային մշակաբույսերից սեխի և ձմերուկի գները հանրապետությունում աճել են համապատասխանաբար 10.1% և 3.4%, իսկ ներմուծված (ցիտրուսային և արևադարձային) մրգից՝ կիտրոնի, մանդարինի, նարինջի գնաճը կազմել է 8.1%, 18.9 և 41.1%: Հանրապետության դիտարկված 5 քաղաքներում արձանագրվել է մրգի 3.9-0.2% գնանկում (համեմատաբար բարձր գնանկում գրանցվել է ք.Գյումրիում): Մայրաքաղաքում մրգի գները նվազել են 0.8%, իսկ դիտարկված մյուս 5 քաղաքներում արձանագրվել է 0.2-7.3% գնաճ:

2005թ. սեպտեմբերին բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբում արձանագրված 8.3% գնաճին հոկտեմբերին հաջորդել է 4.8% գնանկում, ինչին մեծապես նպաստել է գազարի 20.1%, սեղանի ճակնդեղի 19.7%, կանաչ լոբու 17.8%, գլուխ սոխի 17.1%, ծաղկակաղամբի 11.2% գնանկումը: Կարտոֆիլի գնանկումը նշված ժամանակահատվածում կազմել է 4.0%: Կաղամբի, լոլիկի, վարունգի, սմբուկի, կանաչ պղպեղի գներն աճել են 1.3-24.3%:

Բանջարեղենի գների փոփոխությունները 2003-2005թթ. հունվար-հոկտեմբերին

*(նախորդ ամսվա նկատմամբ,%)*



Հանրապետության դիտարկված 8 քաղաքներում արձանագրվել է բանջարեղենի և կարտոֆիլի 18.6-2.9% գնանկում (համեմատաբար բարձր գնանկում գրանցվել է ք. Եղեգնաձորում): Մայրաքաղաքում բանջարեղենի և կարտոֆիլի գները նվազել են 4.6%, իսկ Գյումրի և Դիլիջան քաղաքներում արձանագրվել է համապատասխանաբար 2.6% և 0.3% գնաճ:

*Ոչ պարենային ապրանքների գներ*: Ոչ պարենային ապրանքների շուկայում 2005թ. հոկտեմբերին արձանագրված 0.6% գնաճը 0.5 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը (0.1%):

**Ոչ պարենային ապրանքների հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունները**

*(%)*

| | *2005թ.* | | | | |
|---|---|---|---|---|---|
| | *հոկտեմբերը* | | | | հունվար-հոկտեմբերը 2004թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ |
| | 2005թ. սեպտեմբերի նկատմամբ | 2004թ. դեկտեմբերի նկատմամբ | 2004թ. հոկտեմբերի նկատմամբ | 2002թ. նկատմամբ | |
| ***Ոչ պարենային ապրանքներ*** | **100.6** | **101.8** | **102.1** | **104.6** | **100.2** |
| *այդ թվում`* | | | | | |
| հագուստ և գործվածք | 100.5 | 98.8 | 98.5 | 98.4 | 97.6 |
| վառելիք | 100.5 | 107.1 | 113.1 | 144.6 | 118.2 |
| կահույք | 100.3 | 97.8 | 96.3 | 88.5 | 92.0 |
| գորգեղեն | 100.2 | 100.1 | 100.0 | 102.5 | 98.7 |
| տեքստիլեղեն | 100.0 | 99.9 | 99.8 | 99.0 | 100.7 |
| կենցաղային էլեկտրաապրանքներ | 100.9 | 98.8 | 96.2 | 88.9 | 93.4 |
| խոհանոցային սպասք | 100.7 | 100.7 | 100.3 | 100.0 | 98.1 |
| լվացամիջոցներ | 102.9 | 104.3 | 104.3 | 106.8 | 101.3 |
| շինանյութեր | 100.3 | 100.8 | 100.5 | 97.8 | 98.5 |
| այգեգործական ապրանքներ | 100.0 | 102.8 | 103.4 | 111.4 | 103.9 |
| դեղամիջոցներ | 100.7 | 96.7 | 96.3 | 89.7 | 97.1 |
| անձնական օգտագործման մեքենաներ և բենզին | 98.7 | 113.2 | 117.0 | 142.1 | 106.6 |
| մշակույթի ապրանքներ | 101.1 | 99.0 | 95.1 | 84.9 | 89.0 |
| գրենական պիտույքներ | 100.9 | 105.4 | 105.9 | 106.7 | 102.7 |
| գեղահարդարման ապրանքներ | 100.1 | 99.7 | 99.7 | 101.6 | 100.0 |
| ոսկերչական ապրանքներ | 103.1 | 100.7 | 102.4 | 125.1 | 96.4 |
| անձնապիտո ապրանքներ | 101.5 | 98.6 | 98.1 | 96.1 | 97.3 |

2005թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է բենզինի և դիզելային վառելիքի` համապատասխանաբար 1.0% և 2.6% գնանկում, իսկ 2004թ. դեկտեմբերի համեմատ` 16.2% և 11.5% գնաճ: Հոկտեմբերին 2004թ. հոկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է բենզինի և դիզելային վառելիքի համապատասխանաբար 17.8% և 36.6%, իսկ 2002թ. համեմատ` 44.2% և 73.3% գնաճ:

**Բենզինի և դիզելային վառելիքի գների փոփոխությունները 2003-2005թթ.**

*(2002թ. նկատմամբ, %)*



**Բենզինի ներմուծման[1] և մանրածախ[2] գների փոփոխությունները 2003-2005թթ.**

*(2002թ. նկատմամբ,%)*




**Դիզելային վառելիքի ներմուծման և մանրածախ գների փոփոխությունները 2003- 2005թթ.**

*(2002թ. նկատմամբ,%)*




***Ծառայությունների սակագներ:*** 2005թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 0.1% հավելաճ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 0.2% նվազման դիմաց:

**Բնակչությանը մատուցված ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները**

*(%)*

| | *2005թ.* | | | | |
|---|---|---|---|---|---|
| | *հոկտեմբերը* | | | | հունվար-հոկտեմբերը 2004թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ |
| | 2005թ. սեպտեմբերի նկատմամբ | 2004թ. դեկտեմբերի նկատմամբ | 2004թ. հոկտոմբերի նկատմամբ | 2002թ. նկատմամբ | |
| *Ծառայություններ, ընդամենը* | **100.1** | **101.8** | **101.8** | **105.0** | **100.3** |
| *այդ թվում՝* | | | | | |
| կենցաղային բնույթի | 100.3 | 102.8 | 102.8 | 99.7 | 100.8 |
| բնակարանային-կոմունալ | 100.0 | 101.5 | 101.3 | 104.6 | 101.4 |
| բուժսպասարկման | 99.5 | 99.9 | 100.1 | 99.0 | 99.5 |
| կրանսպորտի | 99.4 | 102.5 | 102.2 | 106.3 | 97.6 |
| կապի | 102.4 | 99.3 | 100.5 | 107.0 | 97.1 |
| մշակույթի | 100.3 | 103.5 | 114.7 | 157.6 | 115.0 |

*[1] Ներկրվող բոլոր տեսակի բենզինների միջին կշռված գին:*
*[2] «Ռեգուլյար» տիպի բենզինի միջին գին:*

| | *2005թ.* | | | | |
|---|---|---|---|---|---|
| | *հոկտեմբերը* | | | | հունվար-հոկ-տեմբերը 2004թ. հունվար-հոկտեմ-բերի նկատմամբ |
| | 2005թ. սեպտեմբերի նկատմամբ | 2004թ. դեկտեմբերի նկատմամբ | 2004թ. հոկտոմբերի նկատմամբ | 2002թ. նկատ-մամբ | |
| կրթության համակարգի | 101.2 | 105.3 | 105.4 | 107.4 | 101.1 |
| հանգստի կազմակերպման | 95.2 | 103.6 | 99.4 | 103.5 | 100.4 |
| հանրային սննդի | 100.0 | 102.2 | 102.4 | 115.3 | 105.0 |
| իրավական և բանկային | 100.5 | 101.1 | 101.1 | 101.1 | 100.4 |

*Սպառողական գների և ծառայությունների սակագների տարածքային առանձնա-հատկությունները:* Հանրապետությունում դիտարկված 5 քաղաքներում 2005թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ գրանցվել է սպառողական գների 0.2-0.8% գնաճ (ամենաբարձր գնաճն արձանագրվել է ք. Թալինում), 3 քաղաքներում` 0.5-0.1% գնանկում, իսկ Երևան և Վաղարշապատ քաղաքներում պահպանվել է սպառողական գների նախորդ ամսվա մակարդակը:

2005թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ հանրապետությունում դիտարկված քաղաքներից 5-ում արձանագրվել է պարենային ապրանքների 0.3-1.2% գնաճ (համեմատաբար բարձր գնաճ նկատվել է ք. Թալինում), 4 քաղաքներում` 1.4-0.1% գնանկում, իսկ ք. Վաղարշապատում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

**Հանրապետության հետազոտված բնակավայրերում կարևորագույն պարենային ապրանքների միջին գները 2005թ. հոկտեմբերի 31-ի դրությամբ**

*(դրամ` կգ-ի համար)*

| | Միս տավարի | Պա-նիր | Կա-րագ | Բուսա-կան յուղ, լիտր | Ձու, տաս-նյակի համար | Շաքա-րա-վազ | Կար-տոֆիլ | Գլուխ սոխ | Կա-ղամբ | Խնձոր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *ՀՀ, միջինը* | **1424** | **1318** | **1654** | **630** | **504** | **250** | **121** | **143** | **82** | **248** |
| *այդ թվում.* | | | | | | | | | | |
| Երևան | 1438 | 1329 | 1668 | 640 | 503 | 249 | 130 | 138 | 87 | 258 |
| Գյումրի | 1413 | 1317 | 1621 | 657 | 533 | 254 | 96 | 149 | 73 | 326 |
| Վանաձոր | 1472 | 1225 | 1525 | 574 | 508 | 241 | 112 | 166 | 76 | 225 |
| Վաղարշապատ | 1460 | 1300 | 1680 | 560 | 480 | 246 | 104 | 150 | 56 | 230 |
| Թալին | 1450 | 1300 | 1700 | 610 | 500 | 250 | 100 | 150 | 80 | 130 |
| Դիլիջան | 1500 | 1200 | 1800 | 595 | 513 | 250 | 100 | 150 | 70 | 200 |
| Հրազդան,Չարենցավան | 1433 | 1390 | 1600 | 620 | 490 | 250 | 105 | 135 | 80 | 200 |
| Եղեգնաձոր | 1250 | 1300 | 1600 | 650 | 550 | 250 | 100 | 150 | 90 | 150 |
| Մարտունի | 1300 | 1300 | 1650 | 650 | 500 | 255 | 110 | 150 | 70 | 300 |
| Կապան | 1200 | 1320 | 1640 | 662 | 500 | 266 | 136 | 166 | 92 | 180 |
| Արտաշատ | 1400 | 1100 | 1594 | 591 | 400 | 250 | 113 | 130 | 66 | 200 |

Վերը նշված պարենային ապրանքների ընդհանուր արժեքը (յուրաքանչյուրից 1կգ-ի, ձվի` տասնյակի և բուսական յուղի` 1 լիտրի հաշվարկով) 2005թ. հոկտեմբերի 31-ի դրու-թյամբ հանրապետությունում միջին հաշվով կազմել է 6374 դրամ (ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է մայրաքաղաքում` 6440 դրամ, իսկ ամենացածրը` ք. Եղեգնաձորում` 6090 դրամ), ինչը 1.4% գերազանցել է նույնանուն ապրանքատեսակների 2004թ. հոկտեմբերի 30-ին արձանագրված ընդհանուր արժեքը (6288 դրամ):

Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2005թ. հոկտեմբերին սեպտեմ-բերի համեմատ գրանցվել է ոչ պարենային ապրանքների 0.2-2.7% գնաճ, ընդ որում գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է Հրազդան, Չարենցավան քաղաքներում: Մայրա-քաղաքում ոչ պարենային ապրանքների գնաճը կազմել է 0.2%:

2005թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ հանրապետության դիտարկված 4 քաղաքներում գրանցվել է ծառայությունների սակագների 0.1-1.1% հավելաճ (մայրաքաղաքում ծառայությունների սակագների հավելաճը կազմել է 0.2%), 5 քաղաքներում՝ սակագների 0.7-0.3% նվազում, իսկ ք. Թալինում պահպանվել է սակագների նախորդ ամսվա մակարդակը:

**Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսը 2005թ. հոկտեմբերին 2004թ. դեկտեմբերի համեմատ, ըստ դիտարկված քաղաքների և ապրանքախմբերի**

*(%)*

| | Սպառողական գների ինդեքսը | այդ թվում | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | սպառման ապրանքների | դրանցից | | | ծառայությունների |
| | | | պարենային ապրանքների | ոգելից խմիչքի և ծխախոտի | ոչ պարենային ապրանքների | |
| *ՀՀ, ընդամենը* | **96.5** | **95.4** | **93.5** | **100.4** | **101.8** | **101.8** |
| *այդ թվում.* | | | | | | |
| Երևան | 97.3 | 96.4 | 94.9 | 100.1 | 101.2 | 101.9 |
| Գյումրի | 95.9 | 95.2 | 93.3 | 100.3 | 101.3 | 99.3 |
| Վանաձոր | 95.8 | 94.5 | 92.6 | 102.2 | 99.4 | 102.1 |
| Վաղարշապատ | 94.2 | 92.7 | 89.4 | 100.8 | 103.7 | 101.7 |
| Թալին | 94.8 | 93.1 | 90.0 | 100.2 | 103.9 | 102.6 |
| Դիլիջան | 96.2 | 94.9 | 92.6 | 101.7 | 102.1 | 102.7 |
| Հրազդան,Չարենցավան | 95.7 | 94.5 | 91.5 | 100.0 | 104.4 | 101.1 |
| Եղեգնաձոր | 95.2 | 93.9 | 91.4 | 100.1 | 102.0 | 101.5 |
| Մարտունի | 95.5 | 94.0 | 91.2 | 99.8 | 103.7 | 102.4 |
| Կապան | 93.7 | 91.6 | 87.4 | 102.4 | 104.6 | 103.3 |
| Արտաշատ | 95.7 | 94.6 | 90.7 | 109.4 | 102.8 | 100.1 |

*Արդյունաբերողների արտադրանքի գներ:* 2005թ. հոկտեմբերին 2004թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների թողարկած արտադրանքի 6.5% գնանկում՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրված 11.8% գնաճի դիմաց:

**Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխություններն ըստ արդյունաբերության ճյուղերի**

*(%)*

| | 2005թ. | | | |
|---|---|---|---|---|
| | հոկտեմբերը | | | հունվար-հոկտեմբերը 2004թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ |
| | 2005թ. սեպտեմբերի նկատմամբ | 2004թ. հոկտեմբերի նկատմամբ | 2002թ. նկատմամբ | |
| **Ամբողջ արդյունաբերությունը** | **98.2** | **104.7** | **147.5** | **109.9** |
| *այդ թվում՝* | | | | |
| էլեկտրաէներգետիկա | 101.0 | 98.3 | 97.4 | 97.6 |
| գունավոր մետալուրգիա | 102.5 | 120.3 | 330.0 | 141.2 |
| քիմիական, նավթաքիմիական արդյունաբերություն | 100.5 | 98.7 | 128.0 | 100.2 |
| մեքենաշինություն | 92.0 | 114.3 | 113.3 | 106.6 |
| այլ արդյունաբերական արտադրություն(ոսկերչական արդյունաբերություն) | 94.3 | 94.9 | 111.3 | 98.7 |
| անտառային, փայտամշակման, թղթի-ցելյուլոզի արդյունաբերություն | 94.5 | 108.9 | 101.6 | 103.9 |
| շինանյութերի արդյունաբերություն | 105.3 | 115.9 | 123.9 | 105.7 |
| թեթև արդյունաբերություն | 102.0 | 107.0 | 103.5 | 103.8 |
| սննդի (ներառյալ ալյուրի ու համակցված կերերի) արդյունաբերություն | 91.9 | 92.9 | 114.3 | 94.9 |
| պոլիգրաֆիական արդյունաբերություն | 117.2 | 117.6 | 122.0 | 86.5 |

*Բեռնափոխադրումների սակագներ:* 2005թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է բեռնափոխադրումների սակագների 0.6% նվազում, ինչը հիմնականում պայմանավորվել է օդային (1.1%), ավտոմոբիլային (1.1%), երկաթուղային (0.7%) տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների նվազումով: Խողովակաշարային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագները նշված ժամանակահատվածում մնացել են անփոփոխ:

2005թ. հոկտեմբերին 2004թ. հոկտեմբերի համեմատ բեռնափոխադրումների սակագների ինդեքսը կազմել է 92.9%, այդ թվում, երկաթուղային տրանսպորտով՝ 87.4%, ավտոմոբիլայինով՝ 112.8%, օդայինով՝ 98.5%, խողովակաշարային տրանսպորտով՝ 88.1%, իսկ հունվար-հոկտեմբերին նախորդ տարվա հունվար-հոկտեմբերի համեմատ՝ համապատասխանաբար 88.7%, 84.3, 108.9, 87.5, 87.5%:

*Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գներ:* 2005թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ գյուղացիական տնտեսությունների կողմից իրացված գյուղատնտեսական մթերքի գներն աճել են 2.4%, պայմանավորված իրացվող ապրանքների սեզոնայնությամբ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել է 1.0% գնանկում): Գյուղատնտեսական մթերքի գնաճի առավել բարձր ցուցանիշ արձանագրվել է Արմավիրի մարզում (6.1%):

**Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքսները ՀՀ մարզերում 2005թ. հոկտեմբերին ըստ բուսաբուծության և անասնապահության ճյուղերի**

*(նախորդ ամսվա նկատմամբ,%)*




2005թ. հոկտեմբերին 2004թ. հոկտեմբերի համեմատ գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքսը կազմել է 91.9%, այդ թվում, բուսաբուծական մթերքինը՝ 82.4%, անասնապահական մթերքինը՝ 107.3%, իսկ հունվար-հոկտեմբերին 2004թ. հունվար-հոկտեմբերի համեմատ նշված ինդեքսները կազմել են համապատասխանաբար 88.1%, 70.8 և 105.8%:

**Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման միջին գները ՀՀ-ում 2001-2005թթ. հոկտեմբերին**

*(դրամ)*

| | Չափի միավորը | *2001* | *2002* | *2003* | *2004* | *2005* |
|---|---|---|---|---|---|---|
| Ցորեն | կգ | 100 | 81 | 120 | 106 | 74 |
| Գարի | - ,,- | 72 | 73 | 97 | 95 | 82 |
| Լոբի | - ,,- | 396 | 406 | 390 | 375 | 367 |
| Կարտոֆիլ | - ,,- | 85 | 93 | 89 | 79 | 80 |
| Կաղամբ | - ,,- | 33 | 33 | 41 | 49 | 50 |
| Գազար | - ,,- | 50 | 47 | 61 | 51 | 60 |

| | Չափի միավորը | *2001* | *2002* | *2003* | *2004* | *2005* |
|---|---|---|---|---|---|---|
| Գլուխ սոխ | - ,,- | 72 | 61 | 122 | 113 | 80 |
| Խնձոր | - ,,- | 57 | 55 | 133 | 122 | 110 |
| Տանձ | - ,,- | 132 | 115 | 136 | 181 | 123 |
| Խաղող | - ,,- | 93 | 104 | 160 | 182 | 161 |
| Մեղր | - ,,- | 2548 | 2199 | 2556 | 2559 | 2543 |
| Միս տավարի | - ,,- | 812 | 870 | 917 | 1009 | 1103 |
| ոչխարի | - ,,- | 802 | 838 | 866 | 1013 | 1114 |
| խոզի | - ,,- | 1074 | 916 | 1071 | 1453 | 1573 |
| Կաթ | լ | 117 | 102 | 112 | 103 | 105 |
| Մածուն | - ,,- | 175 | 172 | 173 | 178 | 169 |
| Պանիր (յուղոտ) | կգ | 846 | 746 | 781 | 855 | 900 |
| Ձու | հատ | 40 | 42 | 45 | 45 | 44 |
| Միամյա խոտեր | կգ | 19 | 18 | 22 | 26 | 23 |
| Բազմամյա խոտեր | - ,,- | 25 | 28 | 28 | 28 | 29 |

## Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսներն ըստ մարզերի

*(% )*

| | *Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքսը* | | | *Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը* | | |
|---|---|---|---|---|---|---|
| | *2005թ. հոկտեմբերը* | | 2005թ. հունվար-հոկտեմբերը 2004թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ | *2005թ. հոկտեմբերը* | | 2005թ. հունվար-հոկտեմբերը 2004թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ |
| | 2005թ. սեպտեմբերի նկատմամբ | 2004թ. հոկտեմբերի նկատմամբ | | 2005թ. սեպտեմբերի նկատմամբ | 2004թ. հոկտեմբերի նկատմամբ | |
| *ՀՀ, ընդամենը* | **102.4** | **91.9** | **88.1** | **97.8** | **112.9** | **106.5** |
| *այդ թվում* | | | | | | |
| Արագածոտն | 100.3 | 101.1 | 100.3 | 100.9 | 116.7 | 106.9 |
| Արարատ | 96.9 | 72.4 | 84.9 | 99.6 | 102.0 | 103.6 |
| Արմավիր | 106.1 | 84.0 | 69.4 | 100.7 | 105.3 | 103.0 |
| Գեղարքունիք | 95.3 | 99.1 | 105.7 | 100.4 | 111.9 | 107.8 |
| Լոռի | 101.9 | 99.5 | 99.6 | 101.9 | 111.3 | 104.8 |
| Կոտայք | 96.5 | 92.2 | 91.3 | 101.1 | 111.3 | 111.3 |
| Շիրակ | 97.1 | 98.3 | 99.0 | 100.1 | 105.3 | 102.9 |
| Սյունիք | 101.1 | 102.9 | 102.1 | 98.3 | 109.2 | 110.2 |
| Վայոց ձոր | 100.1 | 101.1 | 107.7 | 93.0 | 116.6 | 109.5 |
| Տավուշ | 94.3 | 98.7 | 104.7 | 104.1 | 115.7 | 108.8 |